# ՆԱՄԱԿԱՆԻ

**ԲԱԶՄԱՎԷՊԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ.** — Մայիս-Յունիս միացեալ թիւը չորս թերթով կը հրատարակենք. յաջորդ ամիսներուն մէջ պակասը լրացնելու պայմանաւ։

**ԹԻՖԼԻՍԻ ԹԵՐԹԵՐՈՒՆ.** — Գեղունին ղրկուած է. տեղւոյդ Մխիթարեան պաշտօնեաներուն մօտ փնտռելու է։

**ՄԵԾ. ՍԻՄՈՆԵԱՆ ԺԻՋՄԻՐ.** — Կարդացինք Ձեր քարդը. ստացած էք եղեր Գեղունին, և Պարսամեանի յօդուածը բերնուց առնուած կը կրկնէք. կարծենք՝ թէ զղջացած էք Գեղունին ստանալնուդ. և ինչ տարօրինակ զուգադիպութիւն որ Պերլինէն ալ Պ. Ախմունեանը, որուն գրած էր Գեղունիի խմբագրութիւնը՝ շնորհ ընել եւ յղելու իրեն սխալմամբ ղրկուած Գեղունին, սապէս կը գրէ. «Ընդունեցէք դրամը, ուր էր թէ անուշադրութեամբ այսպիսի հաճելի սխալմունքներ ընէիք»։ Մենք չենք զարմանար, մէկը Ասիայէն կը գրէ, միւսը Եւրոպայէն։

Անշուշտ պիտի կարդաք միշտ Եւրոպական մամուլի գնահատականները Գեղունիի մասին. գործ մ'է այս հրատարակութիւնը՝ որ սահմանուած է անճաշակներուն շըրջանակէն դուրս մնալու։ Արեւելցին այսօր երբ Եւրոպա գայ, շատ բաներու վրայ պիտի ծիծաղի և ծաղրէ. սակայն ամէնքս ալ գիտենք։ Ու երբէք չմեղադրէք Պարսամեանը. ան եթէ ինքզինքը Ս. Պապառու Տպարանին սենեակ կապէ ի սէր Աստուծոյ որբերուն, ու գիտէ Գեղունին թղթատող Եւրոպացիները՝ որոնք բացագանչութիւններով իրենց հիացումը կը յայտնեն, պիտի ծիծաղի ատոնց հաշուին վրայ։ Իրենց կարգին՝ պիտի գան նախանձողներ՝ որ պաղ դէմքով մը պիտի թղթատեն Գեղունին և շուտով գայն պիտի գոցեն. Պարսամեանը կրնայ վստահ ըլլալ՝ թէ վերջինները սպանով իր դասակարգէն Ասիացիներ են։

Այդ պարոնը այնքան սահմանափակ միտք ունի՝ որ օր մը ինչ որ Վահան Թէքէեանի քերթուածներուն համար ըսած էր, նոյնը կը կրկնէ իր քննադատականներու մէջ՝ անուն բոյն փոխելով. և տեսէք ինչ գրած է եղեր Թէքէեանի համար (Աւետաբեր 1908, թ. (371) «Ի՞նչ կերպով կրնան գոյութեան իրաւունք ունենալ սա վիժած տողերը»։ Նոյնը անշուշտ կարդացիք Գեղունիի քննադատականին մէջ։

Հապա թատրոնի համար, Աստուած իմ, ինչ տղայական բառեր. «Գրեթէ հինգ հարիւր տարիներէ ի վեր դարերու փոշիին տակ արդէն մգլոտած, ծերացած գիւղացնորդութիւն մը»։ Ողորմելի՛ տղայ. գրաշարնե՞րդ ալ չէին գիտեր թէ ո՛վ է Թատրոնը։ Ես հիմակ ուրախ եմ որ հայերէնը համաշխարհային լեզու մը չէ. և այդ տղայական բառերը (ներողութի՛ւն), ամբողջ ազգի մը անպատուաբեր՝ միայն հայերս կը հասկնանք։ Հապա Հ. Ա. Տիրոյեանի թարգմանութեան մասին ըսածը. «Մանաւանդ անհանդուրժելի են Հ. Աթանաս Վ. Տիրոյեանի թարգմանութիւնները։ Ո՛հ (ո՞հ ըսել կ'ուզէ մեր հայկական քննադատը) զարհուրելի բան է. հայերէն չէ սակայն *, ո՛չ ալ... չինարէն» (ողբալի՛ էջեր). դեռ կը շարունակէ. «Լեզուն այնքան չարչարուած է այդ գրչին տակ, որքան Հայը՝ սուր անոր ձեռքին տակ»։ (միակ լաւ բացատրութիւնն է. պիտի ըսէր Արփիար Արփիարեան, զոր կրնան բռնագիր գրողները օր մը հայ անուան տակ դնել)։ Ես տողերուն թող Ա. Արփիարեան ելլէ գերեզմանէն և իրեն ոսկրէ ձեռքով կզպէ այդ բերանը սա տողերով. «Հ. Տիրոյեանի թարգմանութիւնը Թասսոյի «Երուսաղէմ Ազատագրեալ»էն պարզապէս գլուխ գործոց մըն է աշխարհաբառ տաղաչափութեան արուեստին։ Կորովալից, ներդաշնակ, անսովոր խօսքի մեծ բանաստեղծին արժանաւոր թարգմանութիւն։ Հ. Տիրոյեանի «Երուսաղէմ Ազատագրեալ»ը աշխարհաբառին Միլտոնը պիտի ըլլայ» (Լուսաբեր, Բ. տարի թիւ 170)։ Իրաւ։

Օր մը (1906 Բազմավէպ էջ 92) ես գրած եմ. «Մ. Ա. Պարսամեան (Արեւելեան Մամուլին մէջ) ունի 14 տողերով քերթուած մը. Մի՛ ողբնըներ... կը վերջացնէ. «Մի՛ արթնցներ, անզգայութեան - Հաշիշը թո՛ղ որ քնացնէ զիս, - Մինչեւ որ յոյսերս իրականանան»։ Այդ ցեղէն է - ըսած եմ - Դանիէլ Վարուժանի Հաշիշը. Պարսամեան երբ արթննայ և բաղդ ունենայ կարդալու վերջին գեղեցիկ քերթուածը, քնանալէն առաջ պիտի կրկնէ անգամ մ'ալ՝ Ա՜ւ մի՛ ողբնըներ Եղբէեւ»։ Ես չէի կրնար երեւակայել որ այդ պարոնը պիտի արթննայ. և իր չորս տարուան քունին մէջ հասած թոյնը պիտի թափէ Գեղունիի և անոր բոլոր յօդուածագիրներուն դէմ։ Անշուշտ Թէքէեանն ալ չէր գուշակեր՝ թէ Թուրքիան Սահմանադրական պիտի ըլլայ և «Շիրակ»ի վարմունքին ճեղքին պիտի ենթարկուի։

Ամերիկայի Ազգ շաբաթաթերթին եւս ընդարձակ գրախօսական մը նուիրած է «Գեղունի»ի. ուրախ ենք՝ որ յօդուածագիրը կիրք եղած չէ Պարսամեանի նման, և գնահատեր է Վարուժանի, Զօպանեանի, Շիրվանզադէի, Պարթեւեանի, Տիկին Թէոդիկի եւն յօդուածները. բայց այն եւս կէտի մը մէջ միայն կը շեղի իր ուղղադատութենէն. կրնայինք ցոյց տալ իրեն այդ շեղումը՝ եթէ փափուկ կէտ մը չշօշափէր։

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

* Կ'երեւայ այդ պարոնը ամբողջ ազգի մը [illegible] կ'ուզէ ներկայացնել, Թէքէեանի համար ալ գործածած է. «Հայերէն չէ սակայն ամէն պարագայի մէջ»։

## ՄԵՐ ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բարիզ հրատարակուող Echo de Parisի մայիս 16ի (թ. գ. 4–17) թուոյն մէջ ուրախութեամբ կը տեղեկանանք թէ «Բազմավէպ»իս աշխատակից, և Մխիթարեան ծանօթ աշակերտ Յարութիւն էֆ. Ունճեան Բարիզու Օսմանեան Դեսպանատան և Հիւպատոսութեան երդուեալ թարգմանիչ նշանակուեր է։

Ունճեան էֆ.ի լեզուագիտութիւնը և զարգացումը յայտնի և գնահատելի են. սակայն, փոխանակ այսպիսի անկախ պաշտօնի մը վրայ տեսնելու, մենք պիտի փափագէինք տեսնել զինքը՝ ըստ առաջնոյն՝ Օսմանեան Հայրենիքին մէջ՝ ազգային և պետական գործոց վրայ, ուր այնքան օգտակար ծառայութիւններ կարող է մատուցանել իւր հմտութեամբը, ձեռնհասութեամբը և փորձառութեամբը։

Այսու հանդերձ, ամէն մարդ իր սեփական հաշիւը ինքը գիտէ, կ'ըսէ առածը։

## ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

**ԿԻՐԱԿՈՍ Վրդ. ԳԱՆՁԱԿԵՑԻ.** — Պատմութիւն Հայոց. (Ղուկասեան Մատենադարան, Գ.) Թիֆլիս 1910. տպ. Օր. Աղանեանցի. գին 30 կ։

**Յ. Թ. ՉԱԳՄԱՊՃԵԱՆ.** — Սահմանադրական կառավարութիւնները. Ա. մաս. (Թիւ 5 Հրատր. «Հայրենիք»ի) Պոսթըն 1910. տպ. «Հայրենիք»ի. գին 25 սէթ։

digitised by A.R.A.R.@

**ՏԵՂԵԿԱԳԻՐ** Թիֆլիսի վանաց Աւագ եկեղեցու կրօնապատմական թանգարանի Հայոց Յանձնաժողովի. 1908 ապրիլ 5–1910 ապրիլ 5. Թիֆլիս 1910. տպ. Օր. Ն. Աղանեանի։

**ԱՐԱՄ Յ. ԳԱԶԱՆՃԵԱՆ.** — Խունկ և Արցունք. քերթուածներ. Գագիկ Օզանեանի Յառաջաբանով. Մարզուան 1910. տպ. Ներսօ – Սրապեան. գին 4 ղր։

**ԷՄԻԼ ՊԷՐԴՐԱՆ.** — Նուպար փաշա 1825–1899. Նիւթ և տպաւորութիւնք. Թրգմ. Մեսրոպ Նուպարեան. Պոլիս 1910. տպ. Օ. Արզուման. Հրատ. Պ. Պալենց գրատան. գին 5 ղր։

**ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ.** — Սրբազան Ներշնչումներ. (տօնական քերթուածներ) 1906–1907. Պոլիս 1910. տպ. Օսմ. գործակցական ընկերութեան. գին 4 ղր։

**ԱԹ. ԽՆԿՈՅԵԱՆ.** — Աղուէսն ու Արջը. ժողովրդական հեքեաթ. Թիֆլիս 1910. տպ. Օր. Ն. Աղան. (Հրատ. « Հասկեր » ամսագրի. N. 13)։ Ձրի յաւելուած «Հասկեր»ի։

**ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ** 1906–1910 **Թ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ.** — Թիֆլիս. տպ. Օր. Ն. Աղանեանցի.

**ԲԺԻՇԿ ՍԻՄԷՈՆ – ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ.** — Հայոց Եկեղեցու Նկարչութիւնը և ծուխը՝ ըստ Ռուս Պետ. Օրէնքի XI. Հատ. I. Մասի (Հրատ 1896) [Եկեղեցի–Դպրոց] Առանձին յաւելուածներով. Մոսկուա 1909. տպ. Ե. Աւետիքեանի. Գին 60 կ։

### ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆԷՆ

**ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ ՔԵՐԱԿԱՆ – ԸՆԹԵՐՑԱՐԱՆ.** — Առաջին տարի. բոլորովին նոր և դիւրին ձևով. Պոլիս 1910. տպ. Օ. Արզուման. գին 100 փր։

**ՏԱՐԵՐՔ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ.** — Առաջին տարի. Բոլորովին նոր և դիւրին ձևով.. Այբբենարան, Հեգարան և Ընթերցարան. Պոլիս 1910. տպ. Օ. Արզուման գին 3 ղր։

## Հ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

### ԳԱՀԻՐԷ–(ԵԳԻՊՏՈՍ)

### ՁԵԿՈՒՅՑՈՒՄ

*Ընդհանուր Ժողովի Դիւանի*

Կը փութանք յայտարարել թէ ըստ կանխածանոյց հրաւէրի՝ Մայիս 8ի կիրակի օրը, ժամը 4ին (յ. մ.), Հայկական Ընդհ. Ժողովը տեղի ունեցաւ՝ քաղքիս Ազգ. վարժարանին ժողովասրահին մէջ։ Դիւանը կազմուեցաւ հետևեալ կերպով, Վսեմ. Պօղոս փաշա Նուպար՝ ատենապետ, Տ. Վ. Մալէզեան՝ ատենադպիր, Տեարք Ս. Դաւիթեան և Մ. Խերեան՝ քուէախոյզ։

Ընդհ. Ժողովը, միաձայնութեամբ,

ա) Վաւերացուց Կեդր. Վարչ. Ժողովին համարատուութիւնը՝ 1 Մայիս 1909 — 1910 տարեշրջանի.

բ) Ընդունեց ինչ ինչ բարեփոխութիւններ կանոնագրին 2, 4, 15, 18 և 19 յօդուածներուն մէջ,

գ) Անուանեց Տ. Է. Փափազեանը հաշուեքննիչ 1910—1911 տարեշրջանին համար.

դ) Յայտնեց իր շնորհակալութիւնը Վսեմ. Պօղոս փաշա Նուպարի և Վարչ. Ժողովի միւս անդամներուն, ինչպէս և՝ Վսեմ. Գաբրիէլ Էֆէնտի Նորատունկեանի և Տօքթ. Պ. Կոստանդեանի։

Գահիրէ, 15 Մայիս 1910

Ի Դիմաց Հ. Բ. Ը. Միութեան
Ընդհանուր Ժողովի
Ատենադպիր

**Վ. ՄԱԼԷԶԵԱՆ**

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Կեդր. Վարչ. Ժողովին համարատուութենէն կ'երևայ թէ Միութեան ամբողջ դրամագլուխն է Ե. Ղ. 1.494.495,87 (շուրջ 390.000 ֆրանք), որուն Ե. Ղ.

digitised by A.R.A.R.@

1.001.352,17ը՝ *ըստ կանոնագրի՝ անձեռնմխելի մասը կը կազմէ։*

*Միութեան հիմնարկութենէն ի վեր* (1906) *ղրկուած նպաստներուն համագումարն է Ե. Ղ.* 1.515.549, 54 (*շուրջ* 400.000 *ֆրանք*)։ *Վերջին տարուան մէջ՝ միայն իր յատուկ եկամուտներէն նպաստ ղրկած է Ե. Ղ.* 155.603,45, *իսկ ընդհանուր ծախք եղած է՝ մէջը ըլլալով մասնաժողովներուն ծախքերը՝ Ե. Ղ.* 33.905,50։

*Միութիւնը չորս տարուան մէջ իր սեփական միջոցներով նպաստ ղրկած է՝ Ե. Ղ.* 499.098,84, *նուիրատուութիւններէ գոյացած հասոյթներով՝ Ե. Ղ.* 359.818, *և հանգանակութեան արդիւնքներով՝ Ե. Ղ.* 656.633,70։

*Անդամներու թիւը* 686*էն բարձրացած է* 2117*ի՝ մինչև* 30 *Ապրիլ հասած ամդամացուցակներու համաձայն։*

*Բաց ի երեք մասնաճիւղներէն զոր Միութիւնը ունէր* (*Աղեքսանդրիա, Մանչեսթըր և Պոսթըն*), 27 *նոր մասնաճիւղներ ևս կազմուած են՝ Գահիրէ, Կ. Պոլիս, Իզմիր, Մերսին, Պրուսա, Սըվազ, Խարբերդ, Էնկիւրի, Երզնկա, Էրզրում, Տիարպէքիր, Հալէպ, Տարստնէլ, Փիլիպէ, Ռուսճուգ, Նիւ-Եօրք, Բրովիտէնս, Ֆրէզնօ, Ուսթր, Պրաքթըն, Նիւ-Պրիթըն, Լօրէնս, Րիչմընտ, Բաութէքէդ-Սնթըլ, Փօլս, Իսթ-Քէմպրիճ և Պրիճուօթըր։*

*Կանոնագրին բարեփոխուած յօդուածներուն կարևորագոյն տրամադրութիւններն են՝* 2*րդ յօդուածին համաձայն Միութեան տարեշրջանը փոխան Մայիսի՝ այսուհետև Յունվարին պիտի սկսի,* 4*րդ յօդուածով կը ճշդուին տարբեր երկիրներու համար մուտքի տուրքի և անդամավճարի նուազագոյն քանակը* (*Օսմ. Ղրշ.* 10 *և* 5, *Ֆրանք* 2,50 *և* 1,25, *Շիլին* 2 *և* 1, *Տոլար* 1/2 *և* 1/4 *և Րուպլի* 1/2). 15*րդ յօդուածը կը տրամադրէ որ առնուազն* 16 *ղրուշ ամսաբաժին վճարող անդամները միայն կրնան մասնակցիլ տեղական մասնաժողովներուն և բացառիկ պարագաներու մէջ Կեդր. Ժողովը կրնայ տարբեր կարգադրութիւն մը տնօրինել.* 18*րդ յօդուածը կ'արտօնէ տեղական մասնաժողովներուն՝ իրենց տնօրինութեան և պատասխանատուութեան տակ կազմելու օժանդակ մասնաճիւղներ և մասնաւոր յանձնախումբեր, և կը պարտադրէ անոնց՝ Կեդր. Ժողովին ղրկել հետզհետէ գոյացած բոլոր հասոյթները. իսկ* 19*րդ յօդուածին համաձայն՝ տեղական մասնաժողովներու անդամները իրաւամբ կը մասնակցին նաև Միութեան Ընդհ. Ժողովին։*

*Ընդհ. Ժողովին՝ նիստէն վերջ տեղի ունեցաւ Գահիրէի մասնաճիւղին կողմէ սարքուած հանդէս մը՝ Միութեան քառամեայ գործունէութեան առթիւ, որուն ներկայ գտնուեցան Միութեան անդամներէն շատեր՝ իրենց ընտանիքներով հանդերձ։ Կեդր. Ժողովի կողմէ խօսեցան Վսեմ. Պօղոս փաշա Նուպար, Ե. Ագաթոն պէյ և Տ. Վ. Մալէզեան. հանդիսականներէն խօսք առին՝ Գեր. Մուշեղ Եպիսկ. Սերոբեան և Տ. Մ. Տամատեան։*

---


# ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Պ. ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՆԻ

## Ե Ն Է Ա Կ Ա Ն

ԲՆԱԳՐԷՆ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆԵՑ

**Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ**

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

**ՎԵՆԵՏԻԿ – Ս. ՂԱԶԱՐ**

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

**1910**

**ԳԻՆՆ՝ ՖՐ. 2 – Ղչ 576**


digitised by A.R.A.R.@